Թիւնեանն ու Մ. Պապաջանեանը պնդում էին ծովից-ծով Հայաստանի վրա՝ Տրապիզոնի և Ալեքսանդրէտի ելքերով։ Դաշնակցականների մէջ էլ քիչ չէին ծովից-ծով Հայաստանի կողմնակիցներ, բայց մեծ մասը կանգնած էր միայն Սև ծովի ելք ունենալու տեսակէտի վրա։ Նկատողութեան առնուեց և մանդատի հարցը, բացի սոց.-յեղափոխականներից ու սոց.-դեմոկրատներից, որոնք պաշտպանում էին միութիւնը Ռուսաստանի հետ, Հայ. Խորհուրդը առաջին տեղը տուեց Ամերիկային, ապա՝ Անգլիային, յետոյ՝ Ֆրանսիային, և վերջը միայն՝ Ռուսաստանին։ Հայ.Խորհրդի դեկտ. 3-ի նիստում կազմուեց պատուիրակութիւնը — Ա. Ահարոնեան՝ նախագահ, Մ. Պապաջանեան և Հ. Օհանջանեան անդամներ։ Այս վերջինը դեռ Բերլինում էր։ Հրահանգների վերջնական ձևակերպումը թողնուեց կառավարութեան, որ և յանձնարարեց պատուիրակութեան պաշտպանել Սև ծովի ելքը՝ առանց դնելու Կիլիկիայի պահանջը։ Միևնոյն ժամանակ կարգադրուեց Ա. Ահարոնեանին՝ սերտ գործակցութիւն ստեղծել Պողոս փաշա Նուպարի հետ։ Նոյեմբեր 9-ին պատուիրակութիւնը մեկնեց Թիֆլիս։

*

Դարձեալ հրաշքն էր փրկում հայ ժողովրդին։

Նոյեմբերի կէսերին, Հայաստանի գինուորական նախարարը Երևանի թիւրքական ներկայացուցիչ Ահմէտ Ալի փաշայից ստացաւ հետևեալ գրութիւնը. «Պ. Նախարար, օսմանեան կայսրութեան գլխաւոր սպայակոյտի պետը հրամայում է ինձ հաղորդելու ձեզ, որ Բրեստ-Լիտովսկի սահմաններից դուրս մնացող և թիւրք զօրքերի կողմից գրաւուած հողամասերը պէտք է դատարկուեն վեց շաբաթայ ընթացքում՝ հաշուելով 1918թ. հոկտ.24-ից»։

Եւ հետզհետէ սկսուեց թիւրքերի նահանջը ու նրանց պարպած հողերի գրաւումը հայերից։ Նոյ. 18-ին հայկական զօրքերը մտան Ղարաքիլիսա և իրենց ձեռքը առին շրջանի կառավարութիւնը։ Ահռելի տեսարան բացուեց նրանց առջև. դաւառը բառիս բուն նշանակութեամբ աւերուած ու կողոպտուած էր։ Գիւղացիութեան 98% թալանուած էր մինչև շապկի կոճակը։ Ամէն ինչ տարել էին թիւրքերը — տաւարը, երկրագործական գործիքները, սայլերը, կահկարասիքը, անկողինները, անգամ ճրագները։ Մարդկային կմախքները թափթփուած էին չորս կողմը։ Ղարաքիլիսայի ու Ղըշլախի միջև նեռուած էին 400 դիակներ, Ղըշլախի մօտ՝ Մեծ Կիրճում մարդիկ հաշուել էին 500 դիակ։ Հաղարաւոր դիակներ, դանդեր ու մարդկային ոսկորներ թափուած էին Ալթուն Թախտում ու Վանանց ձորում... Երկաթուղին քար ու քանդ էր արուած, կողոպտուած մինչև դռներն ու պատուհանները։ Երկիրը հասել էր քայքայման վերջին աստիճանին։

Զարհուրելի պատկեր էր նկարում «Зак. Слово»-ի թղթակիցը (1918թ. Նոյ. 22), որ անմիջապէս թիւրքերի հեռանալուց յետոյ, եղել էր Լոռի-Փամբակում.

«Ղալթախչի կայարանից մինչև Ֆոլադերան թիւրքերը տարել են շպալները, պահեստի երկաթուղագծերը, կայարանների կարասիները, շոգե-